

Աշակերտային և Հասարակական
Երկշաբաթաբեր
Ջոյս
1200 րուվան
Հայաստանում 320 դրամ



ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ՆԻԷՐ ԻՐԱՆՉԻՆԵՐԻՆ

ԻՐԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԸ ՅԱՐԳՈՒՄ Է
ԲՈՒՈՐ ՄՇԱԿՈՅԹՆԵՐՆ ՈՒ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Յոյս»-ի
յազոտող համարը
տույս է սեանելու 4
շաբաթ յետոյ,
Ապրիլի 4-ին:

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Գարնանամուտ**
- 3 **Մի իրանական ֆիլմ շահել է Օսկար մրցանակը**
- 4 **Մարտի 1-ի տարելիցին՝ հանրահալաք երեւանում**
- 5 **Ֆրանսիայի սահմանադրական դատարանը մերժել է ցեղապանութեան քրեականացում օրենքը**
- 6 **ԻԻՀ խորհրդարանի նոր հայ պատգամաւորներ**
- 7 **Լեմիկ Աւետեանի Յիշատակին Լեւոն Ահարոնեան**
- 15 **Երաժշտագետ եւ խմբավար՝ Լեւոն Գրիգորեան Դայկ Աճեմեան**
- 18 **Եսամուլ Տական Օսկար Ուայլը**
- 23 **Մարզանք Արման Տէր Պետրոսեան**
- 25 **Ժամանց**

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաբեր

Ե ցարի, քիւ117, Փետրար 22, 2012,
1200 թուման
Հայաստանում 320 դրամ




- 8 **Երեւանի կերպարանափոխումը Մ. Մ.**
- 11 **Հին Երեւանը սպասում է իր վերածննդին Սիրանոյշ Գեւորգեան**
- 13 **Քննապահականները «գրոհում» են Երեւանի այգին Լիլիթ Առաքելեան**

Պ ա Ր Ա կ ե Ր Է Ն ք ա ժ ի Ն

| | | | | | |
|---|--|-----------------|---|---|---|
| 2 | Այս համարի հայերէն էջերում | Լեւոն Ահարոնեան | 11 | Պայման եռամսեա հանդէսը՝ 15 տարեկան Ռոբերթ Սաֆարեան | |
| 4 | Էջմիածինը փոխադրեց Սպահան Յարութիւն Տ. Յովհաննեան | 8 | Հարցազրոյց Շաւարշ Քոչարեանի հետ Թուրաջ Խոսրուի | 13 | Հայ գաղթականները Ռուսաստանում եւ Թուրքիայում Ծովինար Տէրտէրեան |
| 7 | Լեմիկ Աւետեանի Յիշատակին | 10 | Լազար Գալերիի աշխատանքների վերսկսումը | | |

| | | | |
|--|--|--|---|
| <p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաբեր</p> <p>Արտոնատէր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p> | <p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմեն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարուեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p> | <p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմեն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p> | <p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p> |
|--|--|--|---|



ԳԱՐՈՒՆ Է ԳԱԼԻ ...

... Ու ասւածային հանդէս է քայլում
Արաբսի հովտում: Արին-Արմանելին
պսակում է Օաղիկի հէս: Բնութիւնը
առասօրէն փոում է իր փարթամ վար-
դերն ու վարդերը, ինս ու զինս, մրգին ու թռչուն
իրար են խառնում իրենց վարթ աղմուկն ու աղաղա-
կը, խաղն ու սաղը, ամենի վրայ հոյակապ կամար է կա-
պում կանաչ-կարմիրը՝ ծիածանը, իսկ նրանց վերեւ չա-
ռագում ու աշխարհիվը մին ժպտում է գարնան կենսասու
արեւը:

Ու եսպէս կրկնում է ամէն տարի ...

Եղեմական ծաղիկը, Յովհաննէս Թումանեան

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ՆԷՐ ԻՐԱՆՅԻՆԵՐԻՆ

ԻՐԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԴԱՏՎԱՍԸ ԱՇԽԱՐՀԻՆ

Իրանական տարին աւարտուեց երկրի կինօարտադրութեան եւ մշակութային կեանքի համար ուրախալի եւ ոգելորիչ յաղթանակով: Ասդար Ֆարիադի «Նադերի Բաժանումը Սիմինից» կամ «Մի ամուսնալուծութիւն» ֆիլմը, տարւայ ընթացքում մէկը միւսի ետեւից, շահելով միջազգային կինոյի հեղինակաւոր մրցանակները, ի վերջոյ արժանացաւ նաեւ Օսկար մրցանակի, որպէս տարւայ լաւագոյն օտարալեզու ֆիլմ: Սրանից մի քանի տարի առաջ, Մա-



ՀԱՆՐԱՀԱԿԱՔ ԵՐԵՒԱՆՈՒՄ ՄԱՐՏԻ 1-Ի ՄՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԼԻՑԻՆ

ջիդ Մաջիդիի «Երկնային երեխաները» ֆիլմը տեղ էր գտել նոյն մրցանակի թեկնածուների շարքում, սակայն դա չէր համարում այնքան խոշոր յաջողութիւն, ինչքան այսօր Ասդար Ֆարհադիի Օսկարն է համարում:

Երբ Ֆարհադին բեմ բարձրացաւ Օսկարի արձանը ստանալու, մեծ թուով իրանցիներ, աշխարհի զանազան երկրներում, սպասում էին, թէ նա ինչ է ասելու ներկաներին ու Օսկարի մրցանակաբաշխութեանը հետեւող միլիոնաւոր դիտողներին: Նա Իրանի ժողովրդին ողջունեց պարսկերէն լեզուով, եւ յետոյ անգլերէնով շարունակեց այսպէս.

«Այս պահին մեծ թուով իրանցիներ ողջ աշխարհում դիտում են մեզ եւ կարող են պատկերացնել, որ նրանք ուրախ են: Այս օրերին, երբ ամենուր խօսք է գնում պատերազմի մասին, եւ սպառնալիքի ու ահաբեկման խօսքեր են փոխանակուում քաղաքական անձանց միջեւ, ես ցանկանում եմ այստեղ Իրանը ներկայացնել իր շքեղ մշակոյթով: Մի հարուստ եւ հին մշակոյթ, որը կորչել է քաղաքականութեան ծանր փոշու շերտի տակ: Հպարտութեամբ այս մր-ցանակը նւիրում եմ ժողովրդիս, մի ժողովուրդ, ով յարգում է բոլոր մշակոյթներն ու քաղաքակրթութիւնները, եւ ատում է ամէն կարգի թշնամութիւն ու բռնութիւն»:

Այդ հանգամանքը, որ Ֆարհադին խօսում էր ամերիկեան բեմից, եւ այս օրերին, երբ ամենուր խօսք է գնում Իրանի վրայ հաւանական ամերիկեան յարձակման մասին, աւելի իմաստալի են դարձնում նրա խօսքերը եւ ապացուցում, որ «Մի ամուսնալուծութիւն» ֆիլմի Օսկար ստանալը աւելի ընդարձակ սոցիալական եւ նոյնիսկ քաղաքական մշանակութիւն ունի քան կինոյի ասպարէզում մի յաջողութիւն:



Հինգշաբթի օրը, Երեւանում տեղի ունեցաւ Հայ Ազգային Կոնգրեսի հանրահաւաքը՝ 2008 թւականի Մարտի 1-ի դէպքերի չորրորդ տարեդարձի առիթով: Հանրահաւաքի ընթացքում ելոյթ ունեցաւ նաեւ ՀԱԿ-ի ղեկավար Լեւոն Տէր Պետրոսեանը: Սիւննա խօսքերը Մարտի 1-ի դէպքերի մասին.

«Քանի որ այսօր Մարտի 1-ն է, բնականաբար հարկ է սկսել այդ չարաբաստիկ օրւան պատշաճօր թեմայից: Անցեալ տարւայ Դեկտեմբերի 26-ին ՀՀ Յատուկ քննչական ծառայութիւնը սեփական ինտերնետային կայքում ընդարձակ տեղեկատւական հաղորդում հրապարակեց 2008թ. Մարտի 1-2-ի իրադարձութիւնների կապակցութեամբ իր վարոյթում գտնուող քրեական գործի ընթացքի մասին: Կրկնութիւնից խուսափելու համար զերծ մնալով այդ խայտառակ փաստաթղթի մանրակրկիտ իրաւական գնահատականից, որը տրւած է Հայ Ազգային Կոնգրեսի իրաւական յանձնաժողովի կողմից, ես կը բաւարարեմ սոսկ հետեւեալ կարճառօտ արձանագրումով: Նշւած հրապարակմամբ ՅԸԾ-ն ֆորմալ առումով կատարւած ազդարարեց Սերժ Սարգսեանի յայտնի յանձնարարականը եւ ԵՄԽԿ 1837 բանաձեւի պահանջը, իսկ ըստ էութեան, փակւած

համարեց Մարտի 1-ի պետական ոճրագործութեան արիւնալի էջը: Այսինքն, իշխող վարչախումբը, Սերժ Սարգսեանի եւ Հանրապետական կուսակցութեան զխաւորութեամբ, իր վրայ վերցրեց այդ ոճրագործութեան ողջ պատասխանատւութիւնը եւ խորհրդարանական ընտրութիւններից մի քանի ամիս առաջ ցինիկաբար յայտարարեց, որ խաղաղ ցուցարարներին զնդակոծած, հարիւրաւոր մարդկանց հրազէնային ու բեկորային վերքեր պատճառած եւ տասը անմեղ քաղաքացու կեանքը խլած մարդասպաններն անպատիժ են մնալու: Անշուշտ, ժողովրդի պատախանդութեան ու իրաւագիտակցութեան աստիճանից է կախւած, թէ այդ ցինիզմն ինչպիսի հակազդեցութեան կարժանայ առաջիկայ ընտրութիւններում: Բայց անգամ դրանից անկախ, պարզ է մէկ բան. որքան էլ մղձաւանջը շարունակի, որքան էլ բռնապետութիւնը երկարածգի, սեփական ժողովրդի արիւնը թափած ոճրագործները, երբ էլ լինի, կանգնելու են արդար դատաստանի առջեւ: Նիկոլայ Չաուշեսկուի, Էրիկ Յոնկերի, Սադդամ Հուսէյնի, Մուամմար Կադաֆիի եւ Հոսնի Մուբարաքի թշուառ վախճանը ձեզ օրինակ»:

Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը հակասահմանադրական ճանաչեց Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող

օրինագիծը **ԿԻՐՈ ՄԱՆՈՅԵԱՆ.** **ՍԱ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՋԸ ԶԷ**

Փաստը, որ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը հակասահմանադրական ճանաչեց Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրինագիծը, դեռ «աշխարհի վերջը» չէ, Փետրուարի 2-ին Երեւանում լրագրողների հետ հանդիպմանը նման յայտարարություն արեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայ դատի եւ Բիւրոյի քաղաքական հարցերի եւ գրասենեակի ղեկավար Կիրո Մանոյեանը՝ յիշեցնելով, որ այս նասին զգուշացրել էր դեռ օրինագծի ընդունման ժամանակ:

Մեկնաբանելով փաստը՝ նա արձանագրեց, որ այս անգամ, այս «ռաւոնդին» յաղթեցին թուրքական ճնշումները, սպառնալիքները, նաեւ կաշառքները, ինչն իրապէս «պատիւ չի բերում Ֆրանսիային»:

Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի որոշումը, ըստ բանախօսի, միայն թուրքական ճնշում չէ: «Երբ ԱՄՆ պետքարտուղարը յայտարարութիւն կանի,

կամ որոշ եւրոպական կառոյցներ, պարզ կը դառնայ, որ սա Թուրքիային սիրաշահելու-չսիրաշահելու հարց էր ոչ միայն Թուրքիայի, այլեւ այլ պետութիւնների համար»,- ասաց Կիրո Մանոյեանը:

«Սահմանադրական խորհրդի որոշումը, որ ասում է, թէ խօսքի ազատութեան սահմանափակում կայ քաղաքական մէկ որոշումով ցեղասպանութիւնների ժխտումը քրեականացնելու մէջ, միաժամանակ հաստատում է, որ 2000-2001թ. այն օրէնքը, որով Ֆրանսիան ճանաչում է Հայոց ցեղասպանութիւնը, դա ինքը այդ խնդրին չի անդրադառնում, ինչպէս որ չի անդրադառնում նաեւ (19)90թ. Կիոսոյի՝ այսինքն հրեական Ողջակիզումի ժխտումը քրեականացնող օրէնքին, սակայն ակնարկում է դրան, ասելով, որ դա դատարանի որոշումի էութեան ժխտումի հարց է եւ ոչ թէ քաղաքական մէկ որոշումով ճանաչւած: Տարբերութիւնը դա է. Կիոսոյի օրէնքով յղումը կատարւում է

1945թ. ռազմական դատավարութիւններին եւ այդտեղ արժարժեալ փաստերը ժխտելուն, իսկ այս վերջին օրինագիծն ակնարկում է Ֆրանսիայի կողմից ճանաչւած ցեղասպանութիւնները ժխտելուն: Իրենք փորձել են տարբերութիւն գտնել, բայց դա կատի, որ մտքի ճգնում է»,- նշեց Մանոյեանը:

Հարցին, որ եթէ նախագահ եւ նախագահի թեկնածու Սարկոզին նորից սկսի այս օրինագծի անցկացման գործընթաց, ինչ արդիւնքներ կարելի է ակնկալել եւ արդեօք թուրքական լոբբին այդ դէպքում նոր թափով չի սկսի կատեցնել նորացւած նախագծի ընդունումը, Կիրո Մանոյեանը պատասխանեց ասելով, որ դա ընդամենը բարի կամքի արտայայտութիւն կը լինի, քանի որ վերընտրելու դէպքում էլ Նիկոլա Սարկոզին իր լիազօրութիւնների ժամկետում չի հասցնի աւարտին հասցնել օրինագծի վաւերացումը:

Աղբիւր՝ www.tert.am

ՇՆՈՐՀԱԿՈՐԱՆՔ

Բերկրանքով շնորհատրում ենք թարգմանիչ, բեմադրիչ, ֆիլմարւեստի եւ մշակոյթի գործիչ

Անդրանիկ Խեչումեանին

Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի նախարարութեան Ոսկէ Մեդալով պարգեատրման կապակցութեամբ:

Ցանկանում ենք նրան ստեղծագործական առաւել մեծ նւաճումներ եւ նորանոր յաջողութիւններ:

Էլին եւ Հրաչ Միրզախանեաններ

ԿԱՐԷՆ ԽԱՆԼԱՐԵԱՆԸ ԵՒ ՌՈՒԲԵՐԹ ԲԵՂԱՐԵԱՆԸ՝ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՊԱՏՉԱՄԱԴՈՐՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Ուրբաթ օրը, մարտի 2-ին, կայացավ երկրի խորհրդարանի ընտրությունները: Ինչպես գիտենք, իրահայությունը խորհրդարանում ունի երկու պատգամավոր, որոնք ընտրվում են Իրանի հայ քաղաքացիների քվեով՝ Թեհրանում եւ Սպահանում: Այս տարի դժար չէր գուշակել ընտրությունների արդյունքը: Սպահանի եւ հարավային շրջանների հայերը քվեարկել կարող էին միայն Ռոբերթ Բեգլարեանին, քանի որ երկրորդ թեկնածուն արդեն հրաժարել էր մի քանի օր ընտրություններից առաջ: Իսկ Թեհրանում, կարեն Խանլարեանի նախընտրական քարոզարշավից բացի չլսեց ուրիշ ձայն: Կարեն Խանլարեանը եւ Ռոբերթ Բեգլարեանը երկուսն էլ հովանավորում են Դաշնակցութեան եւ Ալիք օրաթերթի կողմից: Համայնքի ոչ դաշնակցական խմբավորումները այս ընտրություններին թեկնածու չունեին: Ռոբերթ Բեգլարեանը երկու շրջան խորհրդարանի պատգամավոր լինելով, արդեն ծանօթ դեմք է համայնքի համար, իսկ Կարեն Խանլարեանը աւելի կարիք ունի ներկայացվելու: Ստորեւ տպագրում ենք նրա յայտարարած ծրագիրը եւ յոյս ունենք մեր յառաջիկա համարներում գրոյցի նստել երկու պատգամավորների հետ էլ, նրանց ծրագրերի մանրամասների մասին:

ԿԱՐԷՆ ԽԱՆԼԱՐԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ ԾՐԱԳԻՐԸ



ՈԱԶՄԱՎԱՐԱՎԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

1. Իրանի տարածքային ամբողջականութեան պաշտպանութիւն եւ ազգային շահերի գերակայութիւն
2. ԻԻՀ ազգային անվտանգութեան եւ սահմանադրական կարգի պահպանում
3. Իրանահայ համայնքի Ֆիզիկական, հոգե-մտաւոր, կրօնական եւ ազգային-հասարակական անվտանգութեան պահպանում
4. Իրանի ազգային եւ միջազգային վարկի եւ հեղինակութեան պահպանում
5. Կրօնա-բարոյական սկզբունքների կիրառում եւ յարգանք՝ հանրային աւանդոյթների, կարծիքի ու հաւատամքների հանդէպ:

ՆՊԱՏԱՎՆԵՐ՝ ԵՐԿՐԻ ՄԱՍՇՏԱՐՈՎ

1. Հայոց Ցեղասպանութեան իրողութեան պաշտօնական ճանաչման եւ դատապարտման հետապնդում՝ ԻԻՀ

խորհրդարանում

2. Ձգտել Իրան-Հայաստան բարիդրացիական յարաբերութիւնների առաւել զարգացմանը՝ ընդհուպ մինչեւ դիւանագիտական ամենաբարձր մակարդակ
3. Աշխատանքային նոր հնարավորութիւնների ստեղծում՝ միջնակարգի եւ համալսարանի շրջանավարտների համար
4. Կրթական եւ մշակութային բազմակողմանի զարգացում՝ երիտասարդների եւ պատանիների համար երկրում
5. Մանուկների եւ տարեցների իրաւունքների պաշտպանութիւն
6. Դպրոցների եւ բարձրագոյն ուսումնարանների կրթական մակարդակի բարելաւում
7. Գիտա-հետազօտութեան ոլորտի ընդարձակում՝ համալսարաններում եւ բարձրագոյն ուսումնարաններում
8. Առողջապահական, կեանքի, անգործութեան եւ հանգստեան շրջանի ապահովագրութեան համակարգի բարելաւում
9. Արհմիութիւնների իրաւական դաշտի զարգացում
10. Հարկային եւ Ֆինանսական համակարգերի բարելաւում

ՆՊԱՏԱՎՆԵՐ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՇՏԱՐՈՎ

1. Իրանի հայկական եկեղեցիների եւ պատմական յուշարձանների պահպանման եւ վերանորոգման ծրագրերի հետապնդում

2. Սատարել հայապատկան դպրոցների եւ հանրային այլ վայրերի նորոգման ծրագրերին, օգտուելով պետական եւ հանրային նպաստներից
3. Իրանահայութեան կրօնական, մշակութային եւ մարզական կեանքի առաւել աշխուժացում եւ խորացում
4. Սահմանադրութեան հիմամբ՝ իրանահայութեան իրաւական հարցերի հիմնական լուծում (ժառանգութիւն, փոխհատուցում, եւ այլն)
5. Պետական յատկացումների նպատակաւղղած կիրառում իրանահայութեան հասարակական կեանքի բարգաւաճման համար
6. Հայապատկան դպրոցների եւ կրթական հաստատութիւնների գիտակրթական մակարդակի բարձրացում
7. Հայագիտական եւ հայերէնագիտական ծիւղերի ընդարձակում՝ երկրի համալսարաններում
8. Սատարել Հայ Առաքելական եկեղեցու եւ հայ յարանաւանական եկեղեցիների միջեւ առկայ փոխ-յարաբերութիւնների պահպանման եւ զարգացմանը
9. Դաւանաբանական անյարի շարժումների քարոզչական ազդեցութիւնների դէմ պայքար
10. Լայն տեղեկատւութիւն՝ հայ արհեստավորների, մասնագէտների եւ գիտնականների կատարած գործերի, դերակատարութեան եւ ծառայութիւնների մասին

ԼԵՏՈՒԷԼ ԱԻՏԵՏԱՆԻ ՄԱՅԻԱՆ ԱՌԻԹՈՎ

Լեւոն Ահարոնեան

Մարդու տարիքը, որ առաջանում է, զուգընթաց նրան իր շրջանի ընկերներն ու բարեկամներն էլ պակասում են. մարդ ակամայ դառնում է իր հարազատներից հեռու մի անձ:

Կիրակի, Փետրուարի 26-ին, իրանահայ համայնքը կորցրեց ազնիւ, ստեղծագործ ու ազգանւէր մի անձի, ում ընկերութեան բախտն են ունեցել եւ ւաւելի քան 70 տարի: Նրա հետ անցկացրել են մանկութեան, պատանեկութեան եւ երիտասարդութեան տարիները: Լեւոնէլ Աւետեանը բազմազաւակ ու միջակ խաւին պատկանող մի ընտանիքի զաւակ էր: Նրանք ընտանիքով օժտուած էին արհեստի բարձր շնորհքներով ու ընդունակութեամբ: Լեւոնէլը, որը մեր ընկերների կողմից Լեւոնի էր կոչուում, ուներ երեք եղբայր եւ երկու քոյր, որոնք, դժբախտաբար, բոլորն էլ մահացել են: Եղբայրները բարձր հմտութեամբ ոսկերիչ եւ արծաթագործ էին, որոնց գիտութիւնն ու արհեստը ինքնին մեծ հարստութիւն էր ստեղծել: Սիրելի Լեւոնիկն ւաւելի շատ ուսումով եւ գիտութեամբ մուտք գործեց այդ արհեստը, եւ առանց ուրիշ վարպետների աշխատանքների կրկնութեան, նա հէնց սկզբից սկսեց իր հնարամտութեամբ նորութիւններ մտցնել իրենց արտադրանքների մէջ: Շուտով Իստամբուլի խաչմերուկի վրայ, «Յոմա» կինոյից ոչ շատ հեռու, բացեց սեփական խանութը, եւ կարճ ժամանակում կառուցեց հսկայական մի շէնք Թեհրանի ամենալաւ թաղամասում՝ Արժանտին հրապարակում՝ «Թալա» (Ոսկի) անունով, ընդարձակ ու շքեղ դահլիճով: Այն ժամանակից էր, որ Լեւոնէլի նորածն եւ ոսկէ, թանկագին գոհարներով զարդարուած արտադրանքները յայտնի դարձան ողջ Իրանում թանկարժէք զարդերի արտադրման բնագաւառում:

Իրանի նախկին թագաւորական ռեժիմի օրօք, նա դարձել էր Իրանի պալատականների հաւատարիմ մարդը: Թագաւորի ու թագուհու հիւրերը եւ միջազգային անւանի դերասանները միշտ իրենց զարդերը գնում էին «Թալա» խանութից: Իրանի Իսլամական յեղափոխութիւնից յետոյ էլ Լեւոնիկը չկորցրեց իր համբաւը, միաժամա-



նակ ինքն իր աշխատանքը ծանօթացրեց Իրանի յեղափոխական կառավարութեանը, եւ նշանակեց աշխարհում յայտնի Իրանի գոհարեղէների զանձի մեծարժէք թանկակին քարերը առանձնացնելու եւ նրանց համար մի վկայագիր պատրաստելու աշխատանքին, որով նա աժանացաւ Իրանի կառավարութեան գնահատանքին: Նա ըստ տեղեկութեանս նոյն աշխատանքն էլ կատարել էր Մաշհադի շիաների 8-րդ իմամի՝ Իմամ Ռեզայի դամբարանի հսկող մեծահարուստ կազմակերպութեան «Աստանէ Ղոդսէ Ռազաի»-ի ունեցած թանկարժէք քարերի վրայ: Լեւոնիկ ուշադրութեան արժանի աշխատանքներից մէկն էր Պերսեպոլիսի քանդակների ոճով պատրաստած արծաթեայ եւ ոսկեայ մատուցարաններն ու բաժակակալները, որոնք մեծ ընդունելութեան եւ գնահատանքի արժանացան:

Լեւոնիկն իր պատանեկան տարիքից միշտ սիրում էր ընթերցանութիւնը, որով իր աշխատանքի ոլորտում նորութիւններ մտցրեց: Նա աշխարհի մի քանի յայտնի քարեղէնների ուսուցման կենտրոններն այցելեց եւ անհրաժեշտ ուսումն ստացաւ: Թեհրանում նա դասարաններ կազմեց բոլոր իրանցիների համար, գոհարագիտութիւն ուսուցանեց եւ այդ ոլորտում էլ գրքեր հրատարակեց:

Այս բոլորից յետոյ, որը նրա կատարած աշխատանքների մի փոքրիկ մասն էր, հարկ են համարում անդրադառնալ նաեւ նրա հայրենասիրութեանը: Նա ապրում էր եւ միշտ էլ հպարտանում իր վանեցի ծագումով: Նա իր պրպտումներով հասաւ այն եզրակացութեան, որ իրենց ընտանիքը Վասպուրականի Արծրունի թագաւորի տոհմից են, որով եւ նոյնպէս համոզուած են նրա ազնութեան ու համեստ բնաւորութեան բերումով:

Այդ սերը դէպի հայրենիքը եւ Վան ու Վասպուրականը, որոնք դժբախտաբար բռնագրաւուած են դաժան թշնամու կողմից, հիմք հանդիսացաւ, որ նա ստեղծի «Վան-Վասպուրական պատմական հարցերի ուսումնասիրութեան կենտրոնը» եւ «Վան-Վասպուրական» միութիւնը, որը յաջողեց հարիւրաւոր վանեցի եւ իրանահայերի տանել մեր բռնագրաւուած երկիրը: Դրանից բացի Լեւոնիկը, իր ազգանւորութեամբ փորձեց մասնակցել համայնքի ազգային գործերին, եւ մի շրջան էլ անդամակցեց Թեհրանի Թեմական Խորհրդին:

Լեւոնիկն իրապէս լաւ անձնաւորութիւն էր: Նրա ընտրած ու հաւանած կեանքի ընկերն էլ արտակարգ ազնիւ ու աշխատասէր հայուհի է: Ես սրտանց միշտ յարգել եւ սիրել են Լեւոնիկին, Նինային, Յովսէփին, Յարմիկին, Յայնուշին. նրանց, ինչպէս եւ նրանց հարսին ու երեխաներին, առողջութիւն ու երկար կեանք, եւ ամենազխաւորն է համբերութիւն են ցանկանում:

Չմոռանամ նշել կեցցէ եւ յարգանք ու պատիւ մեր իրանահայ համայնքին, որ իր հոծ ներկայութեամբ, եւ Իրանի ոսկերիչների տարբեր արտադրողներին ու հաստատութիւններին, որոնք մեծ պաստառներով ու ծաղկեպսակներով յարգեցին ու մասնակցեցին մի ազնիւ ու հայրենասէր անձի յուղարկաւորութեանը:

Ըստ հանգուցեալի ընտանիքի յայտարարութեան, ծաղկեպսակի փոխարէն Ահարոնեան ընտանիքի կողմից «Յայ Դպրոց» հիմնադրամի միջոցով նւիրում է 10 աթոռ-սեղան 20 աշակերտի համար, Յայաստանի սահմանամերձ դպրոցներից մէկին: Դպրոցի անունը կը յայտարարուի հետագայում:

ԵՐԵՒԱՆԻ ԿԵՐՊԱՐԱՆ ԱՓՈՒՆ

Քաղաքները ժամանակի ընթացքում կերպարանափոխում են: Կերպարանափոխել է, եւ շարունակում է կերպարանափոխել, նաեւ Երեւանը: Պատմական խոշոր իրադարձութիւնները իրենց հետքերն են թողնում քաղաքի բնական աւերման, դիտատրեալ քանդման եւ կերտման ու վերակերտման վրայ: Նախասովետական Երեւանից շատ բան հնարաւոր չէ գտնել այսօրայ Երեւանում, իսկ սովետական շրջանի Երեւանը, որն այն քաղաքն է, որ մենք ճանաչում ենք, արագօրէն կորցնում է իր ծանօթ տեսքը: Քաղաքի պողոտաների հեռանկարները ձեւափոխում է հսկայ գովազդների իշխող կշռի ներքոյ, զբօսայգիները դառնում են բացօթեայ կաֆէներ, իսկ հին տուֆակերտ շէնքերը, անհրաժեշտաբար պիտի իրենց տեղը նոր շէնքերին տան: Հիւսիսային պողոտայի օրինակով, երեւի պիտի կերտեն հսկայ նոր բլուկներ: Իսկ ամենուր ծլում են ժամանակակից բրենդներով մոդայիկ հագուստեղէն վաճառող խանութներ: Այսպիսի վերակառուցում ինչքանով է համապատասխանում Երեւանի քաղաքացու կարիքներին եւ ինչքանով է ծառայում նոր ձեւաւորող տեղական եւ արտասահմանեան մեծ կապիտալի շահերին: Երեւանի վերակառուցումը ակամայ իր հետ բերում է լուրջ հարցեր, իսկ դրանք երբեմն յանգում են աղմկալի բողոքների, որոնք իրենց են յատկացնում լրատամիջոցների առաջին խորագրերը: Այսօրայ Հիւսիսային պողոտայի վայրում գտնուող տների բնակիչները դէմ էին հին շէնքերի աւերմանը եւ պահանջում էին «վերանորոգում, քանդելու փոխարէն»: Քաղաքի ճարտարապետական մշակութային հարստութեան ոչնչացման դէմ են բողոքում երիտասարդ ակտիւստներից կազմած միութիւնները, իսկ այսօր բնապահպանական մտահոգութիւններից ելած՝ սոցիալական խմբերը դէմ են քաղաքի պուրակներում շինարարութիւն ծաւալելուն: Գիշտ այս օրերին նրանք բողոքում են Մաշտոցի այգում շէնքեր կառուցելու դէմ, եւ յաջողել են, գոնէ ժամանակաւոր, ընդհատել շինարարական աշխատանքները: Հարց է նաեւ, թէ նոր քաղաքի շինարարութեան գործում ինչքանով են նկատի առնում քաղաքի հաշմանդամների կարիքները, որը ժամանակակից քաղաքի յատկանիշներից է: Խօսք է գնում հին շէնքերի ֆասադների վերակառուցման մասին: Երբ քանդում էին քաղաքի մի շարք շէնքեր, համարակալել են դրանց քարերը, եւ այժմ խոստանում են, որ պիտի ամռանը, իրօք, սկսի այդ շէնքերի վերակառուցումը: Սակայն հարցեր ու խնդիրներ դեռ շատ կան: Մի օր խօսք է գնում «Մոսկա» բացօթեայ կինօթարոնի աւերման եւ դրա տեղը եկեղեցի կառուցելու մասին, մի օր բողոքի ակցիա է անցկացում այնինչ պատմական կառոյցի պահպանման համար, իսկ ոչ բողոքին ընդունելի է նաեւ գեր-մոդէռն արւեստի կոթողների տեղադրումը, ասենք, Կասկադի շրջափակում, նոյնիսկ եթէ դա լինի Բոթերոյի հսկայ կատուն, կամ երաժիշտ Աննօ Բաբաջանեանի այլանդակ արձանը Կարապի լճի ափին: Երեւանի փոփոխութիւնները, եւ դրանց շուրջ առաջացող հարցերը, արտացոլում են Երիտասարդ անկախ Հայաստանում ձեւաւորւած հակասական ճաշակները եւ երկրի հեռանկարի համար գոյութիւն ունեցող տարբեր կարծիքները, եւ իհարկէ նաեւ հասարակ ժողովրդի եւ օլիգախ մեծահարուստների շահերի հակասութիւնը:



Մ.Մ.

ՍՈՒՄԸ՝ ՀԱՐՅԵՐ, ԲՈՂՈՔՆԵՐ





Հրազդանի ափամերձ
բանուկ երթուղին



Տրոլեյբուսներ, որոնք վերջին
տարիներին անհետացել են
քաղաքից



Խորհրդային Երեսանը
խորհրդանշող Լենինի արձանը
հրապարակում, որը նույնպես
վերացել է

ՀԻՆ ԵՐԵՒԱՆԸ ՄՊԱՍՈՒՄ Է ԻՐ ՎԵՐԱՇՆՆԴԻՆ

Սիրանյոշ Գեորգեան

Երեւանի կենտրոնի նախախորհրդային ժամանակաշրջանի ապամոնտաժած շէնքերը ներառող «Հին Երեւան» ծրագիրը սկսել է կենդանութեան նշաններ ցոյց տալ: Նախագծի հեղինակ, ճարտարապետ Լեւոն Վարդանեանն «Արմենիախաուին» ասում է, որ հաւանաբար եղանակները տաքանալուն պէս կը սկսւի ծրագրի իրականացման գործնական փուլը, այսինքն՝ բուն շինարարութիւնը:

Երբ Երեւանի կենտրոնում 2000-ականներին սկսւեցին լայնածաւալ կառուցապատման աշխատանքները, մասնաւորապէս՝ կառուցւեց Հիւսիսային պողոտան, բազմաթիւ հին երեւանեան շէնքեր ապամոնտաժւեցին: Շէնքերի քարերը քաղաքային իշխանութիւնները համարակալում էին եւ պահում՝ վստահեցնելով, որ դրանք կօգտագործւեն Հին Երեւանի կոլորիտը ներկայացնող շէնքերի վերակառուցման ժամանակ: Վարդանեանը ծրագիրը Երեւանի քաղաքային իշխանութիւններին ներկայացրել է դեռ 2005-ին, սակայն, նրա խօսքով՝ հիմնականում տնտեսական ճգնաժամի պատճառով դրա իրագործումը յետաձգւեց, եւ հիմա հազիւ բարենպաստ պայմաններ են ստեղծւել երեւանեան 14 ապամոնտաժած շէնքերի վերականգնման համար: «Իրականում սա հին Երեւան չէ, սա Երեւանի մի կտորն է՝ 300 մետր երկարութեամբ, 70 մետր լայնքով: Դա երկու փողոցների միջու ընկած մի կտոր է: Ես փորձում եմ ապամոնտաժած 14 յուշարձաններն ինտեգրել այս նոր քաղաքաշինական միջավայրին», - ասում է ճարտարապետը՝ յանելելով, որ շինարարութիւնը կարող է 3-5 տարի

տեւել: Նախագիծն իրականացւելու է Երեւանի կենտրոնական Բիւզանդի, Կողբացու, Արամի, Արվեան փողոցների որոշակի հատվածների եւ գլխաւոր՝ Մաշտոցի պողոտայի Սարգսրեան ծննդատանը եւ զբօսայգուն յարող տարածքում: Այս տարածքները 2005-ին կառավարութեան որոշմամբ բաժանւել են լոտերի, հանւել աճուրդի եւ վաճառւել երեք մասնաւոր ընկերութիւնների, որոնք էլ

իրենց պահեստարաններում պահում են ապամոնտաժած շէնքերի քարերը: Ծրագիրն իրականացնելու են լոտերի տէրերը, եւ նրանք էլ կորոշեն, թէ վերականգնւած յուշարձան-շէնքերը ինչ նպատակով կօգտագործւեն: «Թէ շէնքերի ֆունկցիան ինչ կը լինի, ես արդէն չեմ կարող խառնել, դա մասնաւոր ծրագիր է: Բնական է, [Հին Երեւանը] Հանրապետութեան իրապարակին է ան-



միջապես յարում, զբօսաշրջութեան կենտրոն է դառնալու, կը լինեն սրճարաններ, պանդոկներ, ցուցասրահներ, յուշանւէրների խանութներ եւ այլն»,- ասում է Վարդանեանը: Այս օրերին հայ բնապահպանները պայքարում են Մաշտոցի այգում (որի վերելի հատածն էլ է ընդգրկած «Յին Երեւան» ծրագրում) հագուստի տաղաւարների տեղադրման դէմ: Քաղաքապետ Տարօն Մարգարեանը, ի պատասխան բնապահպանների բողոքների, ասել էր, որ կրպակները ժամանակաւոր են եւ դրանք կապանոնտաժեն «Յին

Երեւան» ծրագրի իրականացումից յետոյ: Այգու վերելի հատածում, ըստ ծրագրի, նախատեսւում է վերականգնել Ջանփոլադովի յայտնի թատրոնը, որը խորհրդային ժամանակաշրջանում Սպայի տուն էր դարձել (ներկայիս Վազգէն Սարգսեան փողոցի վերին հատածում): Ընդհանրապէս վերջին 10 տարիների Երեւանի կառուցապատումը մեծ դժգոհութիւններ առաջացրեց ոչ միայն քաղաքի կենտրոնում ապրող մարդկանց, որոնցից շատերը բիրտ միջոցներով վտարեցին իրենց տներից, այլ նաեւ ճարտա-

րապետների, բնապահպանների շրջանում: Բնապահպաններին մտահոգում է կանաչ տարածքների կրճատումը, սէյսմիկ նորմերին չհամապատասխանող կառուցապատումը, ճարտարապետները դրան գումարում են նաեւ իրենց դժգոհութիւնները, իրենց խօսքով աններդաշնակ, անճաշակ ու բազմաոճ շինարարութիւնից: «Յէնց դրսից հիւր ենք ընդունում, տանում ենք Գառնի-Գեղարդը ցոյց տալու, այսինքն ուզում ենք ցոյց տալ, որ մենք պատի ծակից դուրս եկած ժողովուրդ չենք, հին մշակոյթ ունենք, բայց նոյնը չունենք (Երեւան) քաղաքում, ինչպէս բոլոր քաղաքներն ունեն: Չկայ այս միջավայրը»,- ասում է Վարդանեանը: Անցեալ տարի ընդդիմադիր Յայ ազգային կոնգրեսը իշխանութիւններին ներկայացրած իր պահանջներում նշել էր «Երեւանի քաղաքաշինական դէմքի այլանդակման եւ մայրաքաղաքում բարձրայարկ շինարարութեան դադարեցումը»: Սակայն ճարտարապետները լաւատես չեն, որ Երեւանն ամբողջական տեսք եւ քաղաքի դէմքը ներկայացնող ճարտարապետութիւն կունենայ: «Մեր հանրապետութիւնը կոչւում է Հայաստանի Հանրապետութիւն, չի կոչւում Հայաստանի էլիտար հանրապետութիւն: Երեւանն ունի լուրջ քաղաքաշինական պրոբլեմներ, որոնք լուծելուց յետոյ կարող են նաեւ կոսմոսիկ փոփոխութիւններ էլ անել»,- ասում է բնապահպան Գագիկ Սուխունդեանը:



Աղբիւր՝ www.armenianow.com

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՄԱՇՏՈՑԻ ԱՅԳՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆՆԵՐԸ «ԳՐՈՂՈՒՄ» ԵՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՅԳԻՆ

Լիլիթ Առաքելյան

Երեւանի կենտրոնի հանրային այգին այսօր էլ (Փետ.22) շարունակում է շրջափակած մնալ ուստիկանութեան կողմից այն բանից յետոյ, երբ բնապահպան ակտիւիստների խումբը, որպէս իրենց մէկշաբաթեայ բողոքի ակցիայի մի մաս, խոչընդոտում էր հարթակի շինարարութիւնը՝ այն համարելով ապօրինի:

Երկուշաբթի մի քանի տասնեակ ակտիւիստներ ճեղքել են ուստիկանների շղթան, մտել Երեւանի Մաշտոցի այգում իրականացող շինարարութեան հրապարակ՝ ստիպելու շինարարներին դադարեցնել աշխատանքները: Սրան նախորդել են երթը դէպի Երեւանի քաղաքապետարան եւ այգու ճակատագրի հարցով քաղաքապետի հետ բանակցելու անյաջող փորձը: Սակայն գիշերուայ ընթացքում շինարարութիւնը շարունակել է, եւ առաւօտեան Մաշտոցի այգու կրպակներն արդէն ապակեպատած էին: Դեռ անցեալ շաբաթ Երեւանի քաղաքապետարանի ներկայացրած քաղաքաշինական փաստաթղթերը վկայում էին, որ Աբովեան փողոցից Մաշտոցի այգի տեղափոխուած կրպակների շինարարութիւնն օրինական է: Դրանցում ասում է, որ կրպակները տեղադրում են ժամանակաւոր եւ չեն վնասի այգու կանաչ տարածքը: Սակայն «Մենք ենք քաղաքի տէրը» եւ «Մեր քաղաքը» քաղաքացիական նախաձեռնութեան ակտիւիստներն արձանագրել են այդ փաստաթղթերում առկայ մի շարք օրինախախտումներ, որոնք ենթակայ են քննարկման, եւ որոնց հիման վրայ բնապահպանները պահանջում են դադարեցնել այգում ընթացող կառուցապատումը: Բնապահպանները պնդում





են, որ օրինախախտումները կատարել են ՀՀ հողային օրենսգրքի, «Քաղաքաշինության մասին», «Շրջակայ միջավայրի վրայ ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքների մի քանի կետով: Փետրուարի 11-ից տասնեակ ակտիվիստներ ամեն օր բողոքի ակցիաներ են անցկացրել այգում՝ խանգարելով շինարարական աշխատանքներին միայն իրենց ֆիզիկական ներկայութեամբ: Սակայն ոստիկանությունն անցեալ շաբաթ արգելապատեր տեղադրեց տարածքում՝ այգի նրանց մուտքն արգելելու նպատակով: Բնապահպանական կոչերով եւ կառուցապատմանը դեմ վանկարկումներ անելով՝ շուրջ 80 հոգանոց ակտիվիստները երկուշաբթի (Փետ.20) հաւաքել էին քաղաքապետարանի դիմաց եւ ներկայացրել իրենց արձանագրած օրինախախտումների փաթեթը: «Նախ՝ ոտնահարել է օրենքը, իսկ երկրորդ՝ չեն անցկացրել հանրային լսումներ: Քաղաքապետարանում հապճեպ որոշում է կայացրել կոպիտ օրինախախտումներով, եւ այդպէս էլ իրականացոււմ է կառուցապատումը», - ասում է «Մենք ենք քաղաքի տէրը» նախաձեռնութեան անդամ Վահրամ Սողոմոնեանը: Վերջին օրերին ակցիայի վայրն այցելել են նաեւ Հայաստանի մի շարք մշակութային գործիչ-

ներ՝ դերասաններ Երւանդ Մանուրեանը, Աշոտ Աղամեանը, Հայկ Մարութեանը, Յովհաննէս Ազոյեանը, Վարշամ Գեւորգեանը, Արսէն Գրիգորեանը, հեռուստահաղորդավար Եւր Մնացականեանը, երգիչներ Արթուր Իսպիրեանը, Ռուբէն Հախվերդեանը եւ այլք: «Եթէ ծառ չես տնկում, գոնէ մի՛ ոչնչացրու այն: Այդ վնասը վերադառնալու է այն մարդկանց, ովքեր անում են այս ոճրագործութիւնը ծառերի նկատմամբ: Ես կոչ եմ անում այն մարդկանց, ովքեր հեռուստաէկրաններից չեն իջնում եւ անընդհատ գովերգում են Երեւանը, որ հիմա գան ու խօսեն, եթէ դէմ են այգու ոչնչացմանը», - ասում է դերասան Յովհաննէս Ազոյեանը: Դերասան Վարշամ Գեւորգեանը, ով միացել էր քաղաքապետարանի դիմաց անցկացող ցոյցին, համոզւած է, որ կրպակները այգում չեն մնայ: «Պէտք է գիտակցել օրենքի ուժը, որի շրջանակներում եղել են խախտումներ»: Մէկուկէս ժամ բողոքի ակցիան շարունակելուց յետոյ ցուցարարներին այդպէս էլ չյաջողեց հանդիպել քաղաքապետ Տարօն Մարգարեանի հետ եւ շինարարութիւնը կասեցնելու համաձայնութեան գալ: Միայն քաղաքապետի օգնականը դուրս եկաւ ակտիվիստների հետ բանակցելու: Երեւանում շարունակուող բնապահպանական ակցի-

ային արձագանքել են նաեւ քաղաքական գործիչները: Ընդդիմադիր ճամբարի գործիչները հիմնականում ողջունել են երիտասարդների ձեռնարկած քաղաքացիական ակտիւութիւնը: Ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութեան անդամները պարբերաբար եղել են տարածքում, աջակցել ցուցարարներին եւ միջնորդել ոստիկանութեան հետ նրանց բանակցութիւններին: Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչները նոյնպէս աջակցել է բնապահպանական բողոքին: Իսկ ԱԺ ՀՀԴ խմբակցութեան ղեկավար Վահան Յովհաննիսեանը նամակ է ուղարկել քաղաքապետ Մարգարեանին՝ առաջարկելով այդ հարցի շուրջ հանրային լսումներ անցկացնել: Սակայն որոշ իշխանամէտ հասարակական գործիչներ քննադատել են այդ հարցի քաղաքականացումը, նոյնիսկ մեղադրել են բնապահպան ցուցարարներին միջազգային կազմակերպութիւններից ստացած իրենց դրամաշնորհներն արդարացնելու փորձերի համար: ՀՀԿ անդամ Մենուա Յարութեանը կարծում է, որ այս ամբողջ գործընթացն ուղղւած է քաղաքապետ Տարօն Մարգարեանի դէմ: Իսկ նախաձեռնութիւնը որակում է որպէս շոու, գրանտների սպառման մի եղանակ: Ոստիկանութեան աշխատողներն էլ պնդում են, որ ակտիվիստների գործողութիւնները անօրինական են, քանի որ «թոյլատրւած շինարարութիւնը խոչընդոտելը պաշտպանւած չէ հաւաքների ազատութեամբ»: Իսկ քաղաքապետարանը, չնայած ցուցարարների ակտիւ գործողութիւններին, դեռեւս ոչ մի պաշտօնական հաղորդագրութիւն չի հրապարակել՝ կապւած Մաշտոցի այգում քաղաքաշինական օրինախախտումների եւ ակտիվիստների պահանջած լսումների հետ:

Աղբիւր՝ www.armenianow.com

ԹԱՐԻՉԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀՈԳԻ՝ ԼԵՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ

Հայկ Աճեմեան



Լեւոն Գրիգորեանը Թաւրիզ հասաւ 1912 թի ամառն՝ երաժշտագիտական պատրաստութեամբ՝ ինչպէս նաեւ իբր հմուտ

Իրանահայ վաստակաւոր երաժիշտ ու խմբավար՝ Լեւոն Գրիգորեանը ծնւել է 1894 թականին Թաւրիզում, կեանքին հրաժեշտ է տուել 1957 թականին Թեհրանում: Նա երաժշտութիւն է սովորել Թիֆլիսում, իսկ յետոյ՝ Բելգիայում: Հիմնականում դասաւանդել եւ որպէս խմբավար աշխատել է իր ծննդավայր Թաւրիզում: Հայկ Աճեմեանը մի գրքոյկ է հեղինակել նւիրեալ երաժշտագետի մասին, որից ստորեւ ներկայացնում ենք մի քաղաածք:

ջութակահար: Նոյն թի աշնան, հրաւիրւեց Ատրպատականի Հայոց Թեմական Դպրոցը իբր երգ-երաժշտութեան դասատու-ուսուցիչ՝ Հայոց նորընտիր Առաջնորդ Ներսէս Վարդապետ (յետոյ եպիսկոպոս) Մելիք Թանգեանի ժամանակ: Միաժամանակ նաեւ երգ-երաժշտութեան դասեր ստանձնեց Թաւրիզի Հայոց Արամեան ազգային դպրոցում:

Ալէքսան Տէր Վարդանեանի տեսչութեան տարիներին: Երկու դպրոցներումն էլ կազմեց քառաձայն խմբեր, որոնք դպրոցական հանդէսների եւ տօների ժամանակ երգում էին ազգային, հայրենասիրական եւ ժողովրդական երգեր՝ Լեւոնի խմբավարութեամբ: Թաւրիզի Հայոց Ս.Աստուածածին Մայր Եկեղեցում ամէն կիրակի եւ տօն օրերի պատարագներին Թե-

«Մալոն» նազախումբ, 1921 թական, Թաւրիզ: Միջին շարքի կենտրոնում նստածը Լեւոն Գրիգորեանն է:





Ղ. Աղայեանի Անահիտ թատերախաղի դերասաններ, Թարիզ, 1909 թական: Կենտրոնում գաւազանը ձեռքին նստածը Լեւոն Գրիգորեանն է: Լուսանկար՝ Բալաջան Ստեփան Ստեփանեան:

Լեւոն Գրիգորեանի կազմած երգչախումբը: 1906-7 թական, Թարիզ, Հայկազեան-Թամարեան դպրոց: Առաջին շարքում ձախից չորրորդը Լեւոն Գրիգորեանն է:



մական դպրոցի քառածայն երգչախումբը երգում էր՝ Լեւոնի անմիջական խմբավարութեամբ:

Դպրոցական աշխատանքներից ու ժամերից դուրս Լեւոն Գրիգորեանը երաժշտութեան եւ ջութակի ու այլ եւրոպական երաժշտական գործիքների դասընթացներ էր բացել եւ ուներ մեծ թուով աշակերտներ: Երաժշտութեան եւ նւագի ուսուցման աշխատանքներին լծւած էր բուռն թափով միաժամանակ նաեւ երկու դպրոցների երգչախմբերի փորձերն էր կատարում, երգեր ներդաշնակում, մեներգիչներ պատրաստում եւ այլն:

Թարիզի հայ համայնքը՝ հանդիսաւոր եւ տօնական օրերին հոգեկան անհուն հրճւանքով դիտում էր բեմերի վրայ կանգնած երկսեռ երգչախումբը, որ հիանա-

լի ներդաշնակութեամբ երգում էր ազգային, հայրենասիրական եւ ժողովրդական երգեր՝ շնորհալի խմբավար Լեւոն Գրիգորեանի անթերի ղեկավարութեամբ:

Սակայն 1914 թի ամռան պայթեց համաշխարհային մեծ պատերազմը, որի արհաւիրքները նոյն թի աշման մօտեցան Կովկասին ու ապա Իրանի Ատրպատականի նահանգի սահմաններին:

Նոյն թւի Դեկտեմբերին տաճկական բանակները յարձակողականի անցան: Մահւան սպառնալիքի տակ էր Ատրպատականի հայութիւնը, որ նոյն ամսի կէսերից խուճապահար անցաւ Արաքս գետը եւ ապաստան գտաւ Կովկասում: Սակայն կարճ ժամանակից յետոյ, պատերազմի բախտը փոխեց:

Տաճկական բանակները խուճապի մատնուած նահանջեցին Կովկասի եւ Ատրպատականի ճակատներից դէպի թուրքոյ խորքերը: Ռուսական բանակները յարձակողականի անցան եւ արագութեամբ գրաւեցին Տաճկահայաստանի սահմանամերձ նահանգները.- Վան, Բիթլիս, Էրզրում եւ այլ վայրեր:

Կովկասն ապաստանած Ատրպատականի հայութեան մեծ մասը 1915-ին եւ 1916-ին վերադարձաւ իր ծննդավայրը: Վերադարձան Թաւրիզից գաղթած հայերը, որոնց մէջն էր նաեւ Լեւոն Գրիգորեանը՝ հանդերձ ընտանեօք:

Թաւրիզում վերակենդանացաւ հայ կրթական եւ մշակութային կեանքը: Ահա այս շրջանում, 1916-ին Լեւոն Գրիգորեանը Թաւրիզում հիմնեց իր նշանաւոր ՍԱԼՈՆ նազախումբը, որի անդամների թիւը հասնում էր մինչեւ քսանի: Այս նազախումբը ամբողջ երեսուն տարի (1916-1946) գոյութիւն ունեցաւ Թաւրիզում: Նազախմբի անդամների թիւը փոփոխական էր: Երեսուն տարիների ընթացքում՝ «Սալոն» նազախմբում սերունդներ յաջորդեցին իրար, բայց նազախումբը միշտ գոյութիւն ունեցաւ՝ ղեկավարութեամբ Լեւոն Գրիգորեանի:

«Սալոն» նազախումբը Թաւրիզի մշակութային կեանքի զարդերից եւ մնայուն արժէք ներկայացնող ձեռնարկներից մէկն էր: Դպրոցական, ազգային կուսակցական, պետական, պարսկական եւ եւրոպական ամէն տեսակ հանդէսների, տօնակատարութիւնների, պաշտօնական խնջոյքների,

մեծածախս հարսանիքների եւ նման բազմատեսակ ձեռնարկների ժամանակ «Սալոն» նազախմբի ներկայութիւնը կենսական անհրաժեշտութիւն էր:

Լեւոն Գրիգորեանը երգերաժշտութեան եւ նազի շուրջ՝ իր աշակերտների մէջ զարգացրել է միտք ու ճաշակ, սէր ու համակրանք: Մղում է տել նրանց ընդունակութիւններին, քաջալերել է նրանց եռանդն ու աշխատանքը: Եւ այս բոլորի հոյակապ արդիւնքն այն աղաւ, որ նա ամբողջ իրանահայութեան համար պատրաստեց երաժշտական մի դաստիարակած սերունդ-ուսուցիչ, դասատու, ջութակահար, դաշնակահար, լարաւոր եւ փողաւոր գործիքներ նազողներ, երգահաններ, երաժիշտներ, խմբավարներ, երգիչներ, մեներգիչներ եւ այլն, որոնք տասնեակ տարիների ընթացքում Իրանի մէկ ծայրից միւսը, Թաւրիզից մինչեւ Նոր Ջուղա եւ Ռաշտից մինչեւ Աբադան տարածեցին եւ դասաւանդեցին երգն ու երաժշտութիւնը եւ նազն ու ծայնագրութիւնը:

Խորին երախտագիտութեան արժանի են Լեւոն Գրիգորեանի այդ աշակերտները, որոնցից ոմանք ժամանակին անցան արտասահման եւ աւելի զարկ տւին իրենց երաժշտագիտական կրթութեանը, ոմանք ժամանակի եւ տնտեսական պայմանների պատճառով ուրիշ ասպարէզներ ընտրեցին, իսկ մի մասն էլ տասնեակ տարիներ իբրեւ դասատու, երաժիշտ, խմբավար, նազող եւ այլն շարունակում են իրենց հանրանւէր աշխատանքը:

Լեւոն Գրիգորեանը տարիների ընթացքում ներդաշնակել է բազմաթիւ երգեր (Դուդուկ, Դարծեալ անուշ, Դէլ եաման, Բըկիդ մարջան, Բերդիցը դուրս ելայ): Իր վաղամեռիկ Յրաչիկ որդու յիշատակին ծայնագրել է Աւետիք Իսահակեանի երկու բանաստեղծութիւններ՝ *Է՛յ դու քահէլ* եւ *Ուռիների*

տակ, որը լոյս է ընծայել առանձին տետրակով: Քառածայնի է վերածել Մեհրաբեանի *Խնձորի ծառի տակին*, եւ *Գնչուի երգը*:

Ներդաշնակել է նաեւ պարսկերէն երգեր (*Իրանի ազգային Յիմն*, *Իրան*, *Դէլ փասանդ*, *Ջէլվէյէ գոլ*, *Սորուդէ քաւանայի* (քառածայնի է վերածել) *Սորուդէ քարնաւալ* (քառածայն) *Սորդէ բաստէ*): Նաեւ պարսկական *աւազներ*, *թասնիֆներ*, *փիշիարամարներ*, եւ այլն:

Թաւրիզում պարսիկներից կազմեց յատուկ նազախումբ: Թաւրիզի պարսկական դպրոցներում երգի եւ ծայնագրութեան դասատու-ուսուցիչ էր: Այդ դպրոցներում կազմեց նաեւ քառածայն երգչախմբեր: Թեհրան տեղափոխելուց յետոյ, ութը տարի պետական երաժշտանոցում ծայնագրութեան եւ ջութակի դասատուի պաշտօն վարեց:

Ատրպատականի Յայոց Թեմական դպրոցում Լեւոն Գրիգորեանը ամբողջ 25 տարի (1912-1936) ունէր երգչախումբ եւ նազախումբ:

Մօտ հարիւր երկսեռ երգիչներից եւ նազողներից բաղկացած այդ պատկառելի խումբը ոչ միայն Թեմական դպրոցի ձեռնարկներին, այլեւ ազգային եւ այլ մեծ տօնակատարութիւններին բերում էր իր մասնակցութիւնը: Վարդանանց փառատօնը, Ապրիլեան սգատօնը, Յայ Մշակոյթի օրը, յոբելեանական հանդէսները, նոր տարւայ երեկոյթները, սգահանդէսներ, ազգային եւ գրական մեծ դէմքերին նւիրած երեկոյթներ եւ այլն փառաւորում էին Լեւոն Գրիգորեանի երգչախմբի քառածայն երգերով, մեներգերով կամ նազներով, որոնց բոլորի մէջ կար երաժշտական ճաշակ, նրբութիւն, հմայք եւ հոգեկան հաճոյք: Եւ այս բոլորի մէջ փայլում էր Լեւոնի կատարած անձնւէր եւ բարեխիղճ աշխատանքը եւ արւեստագէտի կատարելութիւնն ու հմտութիւնը:

ՕՍԿԱՐ ՌԻՎՅՆԴԻ ՇԵՔԻԱԹԸ ԼԻՉԲԵՆԹ ՅԻԵՐԳԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ



ՕՍԿԱՐ ՌԻՎՅՆԴ

Բրիտանացի, ծագումով իռլանդացի, հանճարեղ բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս Օսկար Ուայլդը (1854-1900) գրել է նաև մանուկների համար: Օսկար Ուայլդը ճանաչած է իր «Դորիան Գրեյի դիմանկարը» (1891) վեպի, «Մալոնե» (1891) ողբերգության եւ «Լրջախոս լինելու կարետրոփները» (1895) կատակերգության համար: Նրա մանկական գործերը հրատարակել են «Երջանիկ արքայազնը» հեքիաթների հաւաքածոյում:

ԼԻՉԲԵՆԹ ՅԻԵՐԳԵՐ

Աւստրացի արեստագէտ Լիզբեթ Յերգերը ծնել է 1954 թականին Վիեննայում: Վիեննայի կիրառական արեստի ակադեմիան աւարտելուց յետոյ, աշխատել է մանկական գրքերի պատկերազարդման բնագաւառում, հիմնականում Միխայել Նոյգեբաուէր հրատարակչութեան համար: Նկարազարդել է Հանս Քրիստիան Անդերսենի, Չարլզ Դիկենզի, Օ. Հենրիի եւ այլ գրողների գործերը, ինչպէս նաեւ Էզոպի հեքիաթները եւ Լուիս Քարոլի «Ալիսը հրաշքների աշխարհում» հանրայայտ վեպը: 1990-ին շահել է Քրիստիան Անդերսենի մրցանակը:




ԵՍԱՍՈՒԼ ՀՍԿԱՆ

Օսկար Ուայլդ

Ամէն օր, դպրոցից տուն դառնալիս, երեխաները մտնում էին Յսկայի այգին խաղալու:

Դա մի մեծ ու գեղեցիկ մի այգի էր՝ փափուկ կանաչ խոտով: Այս ու այն տեղ խոտերի միջից երեւում էին աստղանման հիասքանչ ծաղիկներ, կային եւ 12 ծիրանենիներ, որոնք գարնանը մարգարտավարդագոյն ծաղիկներով էին ծածկւում, իսկ աշնանը՝ հարուստ բերք տալիս: Թռչնակները թառում էին ծառերին եւ երգում այնքան ախորժալուր, որ երեխաները, խաղերը մոռացած, նրանց էին լսում:

- Որքան ուրախ է այստեղ,- ծայն էին տալիս նրանք միմեանց: Բայց մի օր Յսկան տուն վերա-



դարձաւ: Նա հիւր էր գնացել իր ընկերոջ՝ Կոռնուելի Մարդակերի մօտ ու 7 տարի այնտեղ մնացել: Ու քանի որ խօսելիքը սահմանափակ էր եղել, նա 7 տարում ասել էր այն ամէնը, ինչ պիտի ասէր,

իսկ յետոյ որոշել էր սեփական ամրոցը վերադառնալ:

Երբ նա տեղ հասաւ, տեսաւ իր այգում խաղացող մանուկներին:

- Ի՞նչ գործ ունէք այստեղ,- գոռաց նա զարհուրելի ծայնով ու երեխաները փախան:- Իմ այգին իմ սեփականութիւնն է, - գոչեց Յսկան,- եւ թող բոլորն իմանան, որ բացի ինձմից ոչ ոքի թոյլ չեն տայ այստեղ խաղայ:

Եւ նա բարձր պարիսպ կանգնեցրեց այգու 4 կողմն ու ցուցանակ կախեց:

Մուտքն արգելւած է.

Օրինազանցները կը պատժեն:

Շատ եսամոլ էր այս Յսկան:

Աղքատ երեխաները այլեւս խաղալու տեղ չունէին: Նրանք փոր-



ծեցին խաղալ ճանապարհին, բայց այնտեղ չափազանց փոշոտ էր ու քարաշատ, ու դա նրանց դուր չեկաւ:

Այժմ, արդէն դասերից յետոյ, նրանք թափառում էին բարձր պարսպի շուրջն ու գրուցում հոյակապ այգու մասին, որը չէր երեւում:

- Ինչքան ուրախ էինք մենք այգում,- ասում էին նրանք միմեանց: Յետոյ եկաւ գարունը, և ամենուրեք փոքրիկ բողբոջներ ու թռչնակներ յայտնւեցին: Միայն Եսամոլ Յսկայի այգում տնօրինում էր Ձմեռը: Թռչնակներն այնտեղ չէին ուզում երգել, քանի որ մանուկներ չկային, իսկ ծառերն էլ մոռացան



ծաղկել:

Օրերից մի օր խոտերի միջից մի գեղեցիկ ծաղիկ յանկարծ գլուխը հանեց, բայց հէնց որ նկատեց ցուցանակը, այնքան վշտացաւ երեխաների համար, որ իսկոյն նորից թաքնւեց հողի տակ ու քուն մտաւ: Միայն Ձիւնն ու Սառնամանիքն էին իրենց լաւ զգում:

- Գարունը մոռացել է այգին,- գոչեցին նրանք,- ուստի մենք կլոր տարին այստեղ կապրենք:

Ձիւնը խոտը ծածկեց իր հսկայ ճերմակ թիկնոցով, իսկ Սառնամանիքն արծաթագօծեց բոլոր ծառերը: Յետոյ նրանք իրենց մօտ հրաւիրեցին Յիւսիսային Քամուն, ու նա եկաւ: Մորթիներով փաթաթ-

լած, նա ամբողջ օրը ոռնում էր այգում և տեղահան անում ծխնելոյզների խողովակները:

-Ինչ փառահեղ վայր է,- ասում էր Յիւսիսային Քամին,- պէտք է այստեղ հրաւիրել նաեւ Կարկուտին:

Ու Կարկուտը եկաւ: Օրը երեք ժամ նա հարւածում էր ամրոցի տանիքին: Մինչևի որ կտորատեց համարեա բոլոր կղմինդրները, իսկ յետոյ, հնարաւորին չափ արագ պտտուեց այգու շուրջ բոլորը: Նրա զգեստը մոխրագոյն էր, իսկ շունչը՝ սառոյց:

- Չեմ հասկանում՝ ինչու է այսքան ուշանում Գարունը,- ասաց պատուհանի գոգին նստած Եսամոլ Յսկան ու նայեց իր սառած սպի-



տակ այգուն:- Յուսով եմ, եղանակը շուտով կը փոխի:
Բայց գարունն այդպես էլ չեկա, չեկա եւ ամառը: Աշունը ոսկէ մրգեր բերեց բոլոր այգիներին, իսկ Յսկայի այգուն՝ ոչինչ:

- Նա չափազանց եսամոլ է,- ասաց աշունը:

Եւ այդպես, Յսկայի այգուն մշտապես Ձմեռն էր թագաւորում, իսկ Յիւսիսային Քամին, Կարկուտը, Ձիւնն ու Սառնամանիքը պարուն էին ծառերի միջին:

Մի առաւօտ, երբ Յսկան արթուն պառկած էր անկողնում, նրա ականջին գեղեցիկ մեղեդի հասաւ: Ու այնպես ախորժալուր, որ նա կարծեց, թէ արքայի երաժիշտ-

ներն են անցնում: Իրականում դա մի փոքրիկ կանեփահաւ էր ճուղում, բայց Յսկան այնքան վաղուց չէր լսել իր այգուն երգող թռչնակի, որ նրան թւաց, թէ աշխարհում երբեք աւելի սքանչելի բան չի լսել:

Կարկուտը դադարեց ծեծել տանիքը, իսկ Յիւսիսային Քամին այլեւս չոռնաց, ու դրա փոխարէն կիսաբաց պատուհանից անուշ բուրմունք թափանցեց ներս:

-Վերջապէս Գարունը եկաւ,- ասաց Յսկան ու անկողնուց վեր թռաւ:

Եւ ինչ տեսաւ:

Նրա առջեւ հրաշալի տեսարան բացւեց: Պարսպի մէջ բացւած

նեղ անցքից խուժած մանուկները թառել էին ծառերի ճիւղերին: Ամէն մի ծառի մի երեխայ էր նստած:

Ու ծառերն այնքան ուրախ էին մանուկների վերադարձի համար, որ ոտից գլուխ ծաղիկ էին հագել եւ ձեռքերն էին օրորում նրանց գլխավերելը:

Շուրջբոլորը թռչուններն էին ճախրում եւ հրճալից ծլլում, իսկ ծաղիկները գլուխները կանաչ խոտերի միջից հանած, ծիծաղում էին: Իսկապէս, չքնաղ տեսարան էր: Միայն մի անկիւնում դեռ իշխում էր Ձմեռը: Դա այգու ամենահեռաւոր անկիւնն էր, որտեղ մի մանչուկ էր կանգնած: Նա այնքան փոքր էր, որ չէր հասնում ծառի



Ճիւղի եւ դառն արցունք էր թափում ու պտտւում ծառի շուրջը: Խեղճ ծառը եղեամով ու ծիւնով էր պատած, իսկ Հիւսիսային Քամին շարունակում էր փչել ու ոռնալ նրա գլխավերելը:

- Մագլցիր, մանչուկ, - ասում էր ծառը ու կքում ճիւղերը որքան կարող էր: Բայց տղան շատ էր պստիկ:

Ու Հսկայի սիրտը հալւեց այս տեսարանից:

- Ինչ եսանոլն եմ եղել,- մտածեց նա,- այ, թէ ինչու չէր գալիս գարունը: Ես մանչուկին կը նստեցնեմ ծառի կատարին եւ կը քանդեմ պարիսպն ու իմ այգին խաղահրապարակ կը դարձնեմ բո-

լոր-բոլոր երեխաների համար: Նա իսկապէս շատ էր զոջում իր վարմունքի համար:

Եւ Հսկան մատների ծայրերի վրայ իջաւ ցած, բացեց դուռն ու այգի մտաւ: Բայց երեխաները, նրան տեսնելով, այնպէս ահաբեկւեցին, որ ամէն մէկը մի կողմ փախաւ ու կրկին եկաւ Ձմեռը: Միայն մանչուկը չփախաւ, քանի որ նրա աչքերն արտասուքով էին լցած եւ նա նոյնիսկ չնկատեց Հսկայի մուտքը: Հսկան թիկունքից անշուկ մօտեցաւ տղային, քնքշօրէն ասին առաւ նրան ու նստեցրեց ծառին: Ծառն իսկոյն ծաղկեց, եւ թռչնակները ետ դարձան ու ծլլացին, իսկ մանչուկը ձեռքերը եր-

կարեց ու գրկեց Հսկայի վիզն ու համբուրեց նրան: Միւս երեխաները, երբ տեսան, որ Հսկան բարի է դարձել, ետ վազեցին, եւ Գարունն էլ վերադարձաւ նրանց հետ:

- Այսուհետեւ սա ձեր այգին է, փոքրիկներ,- ասաց Հսկան եւ մի մեծ կացին առաւ ու խորտակեց պարիսպը:

Կեսօրին, երբ մարդիկ շուկայ էին գնում, Հսկային տեսան երեխաների հետ խաղալիս աշխարհիս ամենագեղեցիկ այգում:

Մանուկները խաղացին մինչեւ երեկոյ, իսկ յետոյ եկան՝ բարի գիշեր մաղթելու Հսկային:

-Իսկ ո՞ւր է ձեր փոքրիկ ընկերը, որին ես ծառը բարձրացրի,-



հարցրեց Յսկան: Նա այդ տղային բոլորից շատ էր սիրում, քանի որ մանչուկը համբուրել էր նրան:

- Չգիտենք,- պատասխանեցին երեխաները,- նա գնացել է:

- Ասացք նրան, որ վաղն անպայման գայ,- խնդրեց Յսկան:

Բայց երեխաներն ասացին, որ չգիտեն, թե որտեղ է ապրում տղան, քանի որ նախկինում երբեք չեն տեսել նրան: Ու Յսկան շատ վշտացաւ:

Ամէն օր, դասերից յետոյ, մանուկները գալիս ու խաղում էին Յսկայի հետ: Իսկ փոքրիկ տղան, որին Յսկան ամէնից աւելի էր սիրում, այլեւս չէր երեւում: Յսկան բոլոր երեխաներին էլ շատ էր սիրում,

այդպէս էլ լաւ էր վերաբերում, բայց եւ այնպէս, շատ էր կարօտում իր առաջին փոքրիկ բարեկամին ու յաճախ հարցուփորձ էր անում նրա մասին:

- Որքան կուզենայի նրան կրկին տեսնել, - ասում էր Յսկան:

Տարիներն անցնում էին, եւ Յսկան աւելի ու աւելի էր ծերանում ու թուլանում: Նա այլեւս մանուկների հետ խաղալու ուժ չունէր, այնպէս որ նստում էր բազկաթոռին ու նայում, թէ ինչպէս են խաղում երեխաներն ու հիանում էր իր այգով:

- Ես սքանչելի ծաղիկներ շատ ունեմ,- ասում էր նա,- բայց երեխաներն ամենասքանչելին են:

Չմռան մի առաւօտ, հագնելիս, Յսկան դուրս նայեց պատուհանից: Այժմ արդէն նա չէր ատում Չմեռը, քանի որ գիտէր, որ Գարունը պարզապէս քուն է մտել, իսկ ծաղիկները՝ հանգստանում են:

Յանկարծ Յսկան աչքերը սկսեց տրորել, նայել ու նայել, կարծես հրաշք տեսած լինէր: Եւ իսկապէս, հրաշալի տեսարան էր բացել: Այգու ամենախեղճաւոր անկիւնում մի ծառ ամբողջովին ծաղկել էր ու ծածկել չնաշխարհիկ սպիտակ ծաղիկներով: Ծառի ճիւղերը ոսկուց էին եւ նրանցից կախւած էին արծաթ մրգեր, իսկ նրանց տակ կանգնած էր տղան, ում Յսկան ամէնից շատ էր սիրում:

Ուրախութիւնից իրեն կորցրած Յսկան ցած վազեց աստիճաններով ու այգի մտաւ: Նա ուղղակի խոտերի վրայով շտապեց դէպի տղան: Բայց երբ մօտեցաւ, նրա դէմքը շառագունեց զայրոյթից ու հարցրեց.

- Ո՞վ է յանդգնել քեզ վիրաւորել: Տղայի ափերի մէջ նա տեսել էր երկու մեխի հետք, երկու մեխի հետք էլ ոտքերին կար:

- Ո՞վ է յանդգնել վիրաւորել քեզ,- գոչեց Յսկան,- ասա՛, որպէսզի ամեն մեծ թուրս ու սպանեմ մեղաւորին:

- Ո՛չ,- պատասխանեց մանուկը,- Չէ որ սրանք սիրոյ վերքեր են:

- Ո՞վ ես դու,- հարցրեց Յսկան ու մի խորհրդաւոր երկիւղ պատեց նրան, եւ նա ծնկի իջաւ մանկան առաջ:

Մանուկը ժպտաց Յսկային ու ասաց.

- Մի օր դու ինձ թոյլ տւիր խաղալ քո այգում, իսկ այսօր ես քեզ կը տանեմ իմ այգին, որ կոչւում է Դրախտ:

Ու այդ օրը, երբ երեխաները ներս վազեցին այգի, նրանք Յսկային անշնչացած գտան. նա պառկած էր սպիտակ ծաղիկներով ծածկւած ծառի տակ:

ՌԱՅԱՆ ԳԻԳՉԸ 900 ԽԱՂ Է ԱՆՅԿԱՅՐԵԼ ԻՒՆԱՅԹԵՂԻ ԿԱԶՄՈՒՄ

Արման Տ.Ստեփանյան

Անգլիական Մանչեստեր Իւնայթեդի ուելսցի ֆուտբոլիստ Ռայան Գիգզի համար Պրեմիեր լիգայի 26-րդ տուրի՝ Նորլիչի հետ արտագնայ հանդիպումը 900-րդն էր մանչեստերեան ակումբի կազմում: «Չիանալի է, երբ դու 900 հանդիպում ես անցկացնում մի թիմի կազմում, որին միշտ երկրպագել ես, որտեղ կայացել ես թե՛ որպէս մարդ եւ թե՛ որպէս ֆուտբոլիստ: Այս օրը ես կը յիշեմ ամբողջ կեանքիս ընթացքում»- ասել է Գիգզը Sky Sports-ին: Յաւելենք, որ հանդիպման վեջին րոպէներին Գիգզի խփած գնդակը յաղթանակ պարգեւեց Իւնայթեդին՝ Նորլիչի հետ խաղում:

Ռայան ժոզեփ Գիգզը ծնւել է 1973 թականի Նոյեմբերի 29-ին: 1990-91 թականի Անգլիայի Պրեմիեր լիգայի մրցութիւններում նրան առաջին անգամ առիթ ընծայեց խաղալ, ոնց որ ինքն է ասում, իր միշտ երկրպագած թիմի Մանչեստեր Իւնայթեդի կազմում: Իսկ դրան յաջորդող միւս տարում արդէն նա լրիւօրէն ընդունեց Իւնայթեդի կազմում: Այս բոլոր ժամանակներում նա հան-

դէս է եկել որպէս ձախ կիսապաշտպան: Գիգզը շատ յայտնի է իր իւրայատուկ խաղով: Այս երկու տասնեակ տարիների ընթացքում նա իր խաղով միշտ լաւագոյն կերպով կատարել է ակումբի գլխաւոր մարզիչ լեգենդար Ալեքս Ֆերգոսենի հրամանները խաղադաշտում: Դրա փաստը այն է, որ չնայած նրա տարիքին՝ Ֆերգոսենը միշտ էլ օգտուել է Գիգզից՝ որպէս իր լաւագոյն խաղացողներից մէկը:

Այս երկու տասնամեակներում Իւնայթեդը ունեցել է բազմաթիւ թե՛ անգլիական եւ թե՛ եւրոպական յաջողութիւններ, որոնցից ամենակարեւորներից կարելի է նշել 11 Պրեմիեր լիգայի չեմպիոն, 4 FA-Cup-ի եւ 2 Եւրոպայի առաջնութեան գաւաթի չեմպիոն տիտղոսները: Իր սիրած ակումբից բացի, Գիգզը խաղացել է նաեւ Ուելսի ֆուտբոլի Ազգային հաւաքականի կազմում: Դա տեւել է մինչեւ 2007-ի Օգոստոսի 2-ը: Այդ թւից յետոյ նա հրաժեշտ տւեց պրոֆեսիոնալ ֆուտբոլին:

Գերազանց մարզիկ լինելուց



բացի, Օգոստոս 2006-ից նա դարձել է Անգլիայում ԻՒՆԻՍԵՖ-ի դեսպան: Թայլենդում մի հարցազրոյցի ժամանակ, նա ասել է թե՛ «որպէս ֆուտբոլիստ ես երբեք չեմ կարող պատկերացնել խաղալ միայն մէկ ոտքով: Սակայն ցաւօք սրտի դա մի դառն իրականութիւն է, որն այսօր գոյութիւն ունի ամենուրեք, երբ անմեղ երեխաները խաղալիս ակամայ ոտք են դնում գետնում տեղադրւած ականների վրայ»:

ԱՐԹՈՒՐ ԱՔՐԱՀԱՍԸ ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ Է ԱՃԽԱՐՀԻ ԶԵՄՊԻՈՆԻ ՏԻՏՂՈՍԻ ՀԱՄԱՐ

Աբրահամի մարզիչ Ուիլի Վեգները մեծ սպասելիքներ ունի այդ մարտից եւ յայտարարել է, որ «Վիլչեսլսկին շատ աւելի ուժեղ է քան Արթուրի մախորդ մրցակից Պաբլօ Ֆարիասը: Վիլչեսլսկին բազմապրոֆիլ բռնցքամարտիկ է: Նա անցեալ տարի Ֆինլանդիայում նաճեց Եւրոպայի չեմպիո-

նի տիտղոսը: Պետորը շատ աւելի բարձրակարգ մարզիկ է, քան Ֆարիասը: Վստահեցնում եմ՝ երկրպագուները Կիլում հետաքրքիր մարտի ակամատես կը դառնան», - Վեգների խօսքերն է մէջբերում Boxingscene-ը: Իր հերթին Արթուր Աբրահամն ասել է. «Արդէն սկսել ենք նախապատրաստ-

ւել Կիլում կայանալիք մարտին: Նախ պէտք է յաղթեմ Վիլչեսլսկուն, ապա մենամարտեմ աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար»: Յիշեցնենք, որ Արթուր Աբրահամ եւ Պետոր Վիլչեսլսկի մենամարտը կը կայանայ Գերմանիայի Կիլ քաղաքում Մարտի 31-ին:

ԱԳՆԵՇԿԱՆ ՆՇԵՅՑ 2012-Ի ԻՐ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Լեհ թենիսիստուհի Ագնեշկա Ռադւանսկան Դուբայի WTA մրցաշարի եզրափակիչում 2 սեթում (7:5, 6:4) պարտութեան մատնեց գերմանուհի Իուլիա Գերգեսին եւ նւաճեց իր կարիերայի 8-րդ չեմպիոնական տիտղոսը: Մինչ եզրափակիչ հասնելը Ռադւանսկան մրցաշարից դուրս էր թողել Կանադայի ներկայացուցիչ Ալեքսանդրա Կոզնեակին, իսրայէլցի Շահար

Պիրին, գերմանուհի Սաբին Լիսիցկիին եւ սերբ թենիսիստուհի Ելենա Եօնկովիչին: Նշենք, որ Ագնեշկա Ռադւանսկայի համար այս մրցաշարն առաջինն էր 2012 թւականին, որը յաղթելուց յետոյ լեհ թենիսիստուհին WTA վարկանիշային աղիւսակում բարձրացաւ 5-րդ հորիզոնական:



ՀԱՅ ԲՈՆՅՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ԲԱԺԻՆ ՀԱՍԱԲ ԲՐՈՆՉԷ ՄԵՂԱԸ

Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթացող բռնցքամարտի մրցաշարն աւարտուեց հայ բռնցքամարտիկների համար: Կիսաեզրափակիչ դուրս եկած մեր երեք մասնակիցներն էլ պարտութիւն կրեցին եւ բաւարարուեցին բրոնզէ մեդալներով: 49կգ քաշային կարգում Յովհաննէս Դանիէլեանը 25:9 հաշւով պարտութիւն է կրել բուլղարացի Ալեքսանդր Ալեքսանդրովից: 81կգ քաշային կարգում Արթուր Խաչատրեանը 15:4 հաշւով զիջել է կուբացի Խուլիօ Սեզար Պերասին, իսկ գերծանր քաշային Սերգէյ Պօղոսեանը 13:4 հաշւով պարտուել է մէկ այլ կուբացի Էրիսլանդի Սաւոն Գոտիլային: Յիշեցնենք, որ Սոֆիայում Հայաստանը ներկայացւած էր 6 բռնցքամարտիկով, եւ աւելի վաղ պարտութիւններ էին կրել նաեւ Վլադիմիր Սարուխանեանը (60կգ), Յովհաննէս Բաչկովը (56կգ) եւ Բարեղան Յարութիւնեանը (52 կգ):



ՋՈՐՂԱՆԸ ԴԱՏԻ Է ՏԱՆՈՒ ՉԻՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ



Համաշխարհային բասկետբոլի լեգենդ Մայքլ Ջորդանը դատի է տւել Չինաստանի մարզահագուստ եւ մարզակօշիկ արտադրող ամենամեծ ընկերութիւններից մէկին: Տեղի ՋԼՄ-ների հաղորդմամբ՝ Ջորդանը Qiaodan Sports ընկերութեանը մեղադրում է իր անունն առանց իր համաձայնութեան օգտագործելու համար: ԱՄՆ-ի հաւաքակաւնի եւ Չիկագո Բուլզի նախկին առաջատարը զայրացել է, որ

Qiaodan Sports-ը ոչ միայն իր անունն է օգտագործել որպէս ապրանքանշան, այլեւ իր երեխաների, բացի այդ՝ նրանք օգտագործել են նաեւ 23 համարը, որի տակ միշտ հանդէս է եկել Ջորդանը: Բասկետբոլիստը յայտարարել է, որ ինքը գումարի պատճառով չի դիմել դատարան եւ դատը յաղթելու դէպքում, ամբողջ գումարը կուղղի Չինաստանում բասկետբոլի զարգացմանը:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | | 5 | | | 3 | 6 | |
| 3 | | | | | 9 | | 2 | |
| | | 7 | 2 | | 8 | | | 4 |
| | 1 | 9 | | | | 8 | 7 | 3 |
| 4 | | 3 | 8 | 9 | 7 | | | 1 |
| | | 2 | 3 | 5 | | 4 | | |
| | | | | | | | 8 | 7 |
| 8 | 5 | | | 1 | 6 | 9 | | |
| 2 | | | 9 | 8 | | 1 | 4 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 8 | | 5 | | | | | |
| | | | | | | 3 | | 7 |
| | | 4 | | 6 | | | | |
| | | 3 | | 4 | | | 5 | |
| | 4 | | 8 | | 2 | 9 | | |
| 7 | | | | | | | | 6 |
| | | | | | 4 | 1 | | |
| 9 | | 5 | | 7 | | | | 3 |
| | 1 | | 9 | | | | 6 | |

| | | | | | | | | |
